

No 21/01-1
1211 01 2013թ.



ՇԵՆ-ԿՈՆՑԵՐՆ ՓԲԸ

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի
նախագահ պրն. Ա. Զավադյանին

Հարգելի պարոն Զավադյան

Համաձայն ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի կանոնակարգ 4/04-ի, 50-րդ կետի Ձեզ եմ ներկայացնում 'Շեն-Կոնցերն' ՓԲԸ-ին վերաբերող 18.01.13թ-ի էական տեղեկությունը, որը նաև տեղադրված է նաև մեր պաշտոնական կայքում (կցվում է աղբյր 1 թերթ):

Տնօրեն



Պապ Բադալյան

18.01.2013թ.

Համաձայն ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի կանոնակարգ 4/04-ի, 50-րդ կետի, բացահայտում են <Շեն-Կոնցեռն> ՓԲԸ-ին վերաբերող հետևյալ էական տեղեկությունը՝

"Շեն-Կոնցեռն" ՓԲԸ-ն կորպորատիվ կառավարման համակարգերի ներդրման շրջանակներում շարունակում է կառավարման արդյունավետության բարձրացմանն ուղղված քայլերը և որոշում էր կայացրել հաշվապահական հաշվառման վարումը (ֆինանսական, հարկային և կառավարչական հաշվառումը) և ֆինանսական համակարգերի կառավարումը հանձնարարել մասնագիտացված կազմակերպության:

Հայտարարված մրցույթին մասնակցել են և միջազգային ցանցի անդամ, և տեղական հեղինակավոր աուդիտորական, խորհրդատվական կազմակերպություններ:

Շնորհից կատարվել է տեխնիկական առաջարկների հիման վրա: Հաշվի է առնվել մասնագիտացված կազմակերպության բարի համբավը, փորձը, աշխատակիցների փորձառությունը և որակավորումը, ինչպես նաև հաշվապահական ու ֆինանսական համակարգերի կառավարման առաջարկվող մոտեցումները:

Ներկայացված առաջարկների հիման վրա "Շեն-Կոնցեռն" ՓԲԸ-ն 18.01.2013թ-ի տնօրենների խորհրդի նիստով որոշում է կայացրել 2013թ. հունվարի 1-ից հաշվապահական հաշվառման վարումը և ֆինանսական համակարգերի կառավարումը հանձնարարել "ԹՄ Աուդիտ" ՓԲԸ-ին: